Արձանագրություն N 4

<<ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/3>> ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգով հայտարարված Ծաղկաձոր համայնքի կարիքների համար մանկական արվեստի դպրոցի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր 09 հոկտեմբեր 2019թ.

ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի
Նախագահ՝ Գ.Հայրապետյան
անդամներ՝ Ն.Խաչատրյան
Վ.Հայրապետյան
Լ.Խաչատրյան
Ա.Մեսրոպյան
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման մասին

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետում **<<ԲԱԶԱԼՏՇԻՆ>> ԱԿ**-ն ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.2 ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

1.3 ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացությամբ արձանագրվել է, որ մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 235843 (երկու հարյուր երեսունհինգ հազար

ութ հարյուր քառասուներեք) ՀՀ դրամի չափով /եզրակացությունը կցվում է / :

2. Նիստը կասեցնելու մասին

(Գ.Հայրապետյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ և 48-րդ կետերի պահանջները՝ հանձնաժողովը որոշեց երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը և ծանուցել <<**ԲԱՁԱԼՏՇԻՆ**>> **ԱԿ**-ին ՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը՝ պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելով կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակցի կողմից սույն արձանագրության 2-րդ կետում նշված փաստաթղթի ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը	***Ստորագրությունը***
Նախագահ՝ Գ.Հայրապետյան	
Անդամներ՝ Ա.Մեսրոպյան	
Ն.Խաչատրյան	
Լ.Խաչատրյան	
Վ.Հայրապետյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	